



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆ ՈՒ ՃՐԱԳԱԼՈՅՑ**

Աւագ Շաբթուան վերջին երկու օրերը նուիրուած են Քրիստոսի երկրաւոր կեանքի ամենէն տխուր յիշատակներուն՝ անոր կրած չարչարանքներուն, խաչելութեան, թաղման, սակայն նաեւ անոր Յարութեան աւետիսին նախապատրաստութեան:

Աւագ Ուրբաթ օրը, մեր Թեմի բոլոր եկեղեցիները յատուկ արարողութիւններով նշեցին տխուր դէպքերուն յիշատակը:

Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ օր, Օրէնճ Քառնթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Թաղման արարողութեան: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը յիշեցուց հաւատացեալներուն, թէ այս արարողութիւնը յիշատակումն է Քրիստոսի երկրաւոր առաքելութեան գագաթնակէտին, որ է մարդկութեան մեղքերը ուսին առած Անոր խաչ բարձրանալն ու մարդուն համար իր կեանքը նուիրել: Ան յորդորեց հաւատալ Յիսուսի, որովհետեւ Աստուած այնքան կը սիրէ մեզ, որ իր միաձինը չիսնայեց ու աշխարհ ղրկեց, որպէսզի յաւիտենական կեանք շնորհէ Անոր հաւատացողներուն, խոստացաւ կորստեան չմատնել զանոնք, այլ արժանի ընել երկինքի արքայութեան::

### **ՃՐԱԳԱԼՈՅՑ**

Ս. Յարութեան տօնի նախօրեակին, Առաջնորդ Սրբազանը Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ ճրագալոյցի Ս. Պատարագը մատուցանեց, ու հաւատացեալներուն տուաւ Քրիստոսի յարութեան աւետիսը: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած, որ իր Միաձինին Յարութեան ոգիով տոգորէ բոլոր հաւատացեալներն ու յատկապէս զայն տարածէ մեր վերականգնող Հայրենիքին ու ժողովուրդին վրայ:

## **GOOD FRIDAY AND EASTER EVE SERVICES**

On the evening of Friday, March 21st, services commemorating the burial of Jesus Christ took place in all Prelacy Churches. H.E. Archbishop

Moushegh Mardirossian, Prelate, conducted the burial service at Forty Martyrs Church in Orange County and delivered his message on this solemn occasion.

The Prelate reminded the faithful that this service commemorates the culmination of the earthly ministry of Jesus Christ which was His sacrificing His life for mankind. He urged the faithful to place their absolute trust in God for His love is so great He send His Only-Begotten Son to save us and make us worthy of eternal life.

On the evening of Saturday, March 22<sup>nd</sup>, the Prelate celebrated Easter eve Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello. In his sermon he prayed to Almighty God for the spirit of the Glorious Resurrection of Christ to resonate throughout the Diaspora and Armenian and to renew and reinvigorate our faithful.